ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1962 Общественные науки

Լ. Ս. Մաքսուդյան

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայումս լեզվի ստրուկտուրալ ուսումնասիրությամբ զբաղվող մի շարք կոլեկտիվներում առաջ է քաշվում լեզվի, այսպես կոչված, մաթեմատիկական մոդելի կառուցման հարցը։ Այդ նշանակում է՝ մաթեմատիկական հաշվումների մեթոդով լեզվական իրողությունների ձևական աքսիոմատիկ նկարագրություն, լեզվի ձևական օրինաչափություններն ամփոփող կանոնների ֆորմալիզացում։

Նման աշխատանքի արդյունքը լինելու է բառերի, բառաձևերի ու նախադասությունների կառուցումը մաթեմատիկորեն ֆորմալիզացված լեզվի ձևական օրենքների հիման վրա։

Բառակազմության ձևական մոդելի ստացման նպատակով կատարվող առաջին քայլը հանդում է բառի կառուցման ձևական օրենքների «աքսիոմաների» կազմելուն։

Դրա համար նախ անհրաժեշտ է բառը մասնատել, ստացված նյութը դասակարգել ըստ բառի կառուցվածքում նրա բաղադրիչների տեղի ու դերի, այսինքն՝ սկսել բառակազմական անալիզից։

Բառ կազմող հիմնական նյութը ձևույթն է։ Ելնելով մեր մոտեցման սպեցիֆիկ բնույթի պահանջներից և օգտագործելով պրոֆեսոր Սևակի ձևույթ հասկացողությունը, ձևույթ համարում ենք քերականական բնութագրով օժտված լեզվի հնչյունական այն նվազագույն միավորը, որը լեզվի մեջ ունի որոշակի բովանդակություն և իմաստ։

Բառը կարող է բաղկացած լինել ձևույթների սահմանափակ քանակից և այդ ձևույթների զուգորդություններ կազմելու հնարավորությունները իրենց հերթին նույնպես սահմանափակ են։

Ստրուկտուրալ ուսումնասիրության մեթոդը լեզուն դիտում է որպես մի սիստեմ, «որը բացառապես հենված է իր կոնկրետ միավորների հանդիպադրության վրա»։ Այդ հանդիպադրությունների հիման վրա է ստեղծվում լեզվական նշանի վալենտականությունը (արժեքը), լինի դա բառ, ձևաբանական էլեմենտ և դրանով արտահայտված ձևաբանական կատեգորիա, կամ առանձին հնչյուն[1]*։*

Լեզվի ստրուկտուրալ անալիզի (ուրեմն և բառակազմական անալիզի) հարցը սերտորեն կապվում է վերոհիշյալ դրույթի հետ։

Հայոց լեզվում գոյություն ունեցող բառակազմության կառուցվածքային ձևերից ամենից ավելի ուշադրության արժանի է ածանցումը։

Բարդ բառերի ստրուկտուրալ անալիզը կապված է բարդությունների հետ.

---

1 Ф. де Соссюр, Курс общей лингвистики, М., 1933.

այստեղ դժվար է արտաքին, ձևական հատկանիշների հիման վրա ձևույթների դասդասում կատարելն ու դրանց զուգորդություններ կազմելու հնարավորությունները նկարագրելը։ Մինչդեռ ածանցման ժամանակ բառը կազմող ձևույթների հիմնական սահմանազատումը, ըստ նրանց տեղի ու դերի, արդեն իսկ կա լեզվի մեջ, որը և հող է հանդիսանում հանդիպադրությունների հարցի դրման և ստրուկտուրալ անալիզի կիրառման համար։

Ածանցում կոչում ենք բառակազմության այն եղանակը, երբ որոշակի բնույթի ձևույթների հաջորդական միացումով է կազմվում նոր բառ։

Ստրուկտուրալ ուսումնասիրության տեսակետից բառակազմական անալիզի հիմնական նպատակը հանդիսանում է հնարավորին չափ լիակատար քերականական ինֆորմացիայի ստացումը բառի մասին՝ առանց կոնտեքստին դիմելու։ Այդ նախապայմանից ելնելով բառակազմական անալիզի հիմնական հարցեր համարում ենք.

1. Որոշակի զուգորդություններում բառ կազմող ձևույթների հիմնական խմբերի առանձնացումն ու բնորոշումը։

2. Բառ կազմող ձևույթների իրարամերժ կարգերի և հակադիր քերականական հատկանիշների դասերի սահմանումը։

3. Տվյալ բառի սահմաններում քերականական նույնանության հանումը։

Առանձնացնում ենք ձևույթների երկու խոշոր դասեր, ինչպես այդ արված է տրադիցիոն քերականության մեջ, որոնց կոչում ենք՝ 1. հիմնական (կամ հիմքային) և 2. երկրորդական (կամ ձևային) ձևույթներ։

Հիմնական կամ հիմքային է այն ձևույթը, որը պարունակում է գոնե մինիմում քերականական ինֆորմացիա և որն ստացվում է բառի քերականական բնութագրի համար վճռական նշանակություն ունեցող ինֆորմացիա պարունակող ձևույթները բառից կտրելու, առանձնացնելու հետևանքով։

Այն երկրորդական ձևույթները, որոնք որոշակի քերականական ինֆորմացիա չեն պարունակում, վերցվում են հիմքի հետ միասին։ Այսպիսով, հայերենի նախածանցների մի ամբողջ շարք, որոնք բառի համար ունեն զուտ իմաստային արժեք, վերցվում են հիմքին միացած (բաց-, բաղ-, հետ-, վեր-, ներ-, և այլն)։

Այս սկզբունքով առանձնացված հիմքը երբեմն համընկնում է տրադիցիոն քերականության հիմք հասկացողությանը, երբեմն արմատ և բուն հասկացողություններին, իսկ երբեմն յուրօրինակ, զուտ ձևական սկզբունքով սահմանված մի միավոր է։ Այսպես օրինակ՝

Թվել, թվային, թվական, թվերից, թվապես բառերի հիմքն է «թվ»։

Գծագրական, գծագրել, գծագրություն բառերի հիմքն է «գծագր»։

Բացասել, բացասական, բացասաբար բառերի հիմքն է «բացաս»։

Այսպիսի հիմունքով սահմանված հիմքը որպես մինիմում պետք է կրի խոսքի մասային պատկանելության հատկանիշ։ Ելնելով տվյալ հիմքի տվյալ խոսքի մաս հանդիսացող բառի կազմում հանդես գալու հավանական հաճախականությունից, կարող ենք այդ հիմքին վերագրել այս և ոչ այլ խոսքի մասային հատկանիշ։

Այսպես՝ թղթ հիմքին վերագրում ենք գոյականի հատկանիշ, նկատի ունենալով, որ նա ավելի հաճախ հանդես է գալիս թուղթ բառի թեք հոլովներում, քան այլ խոսքի մաս հանդիսացող բառերի կազմում (թղթել, թղթային)։

Այդ նույն հաճախականությունը նկատի ունենալով, որոշ հիմքերի վերագրվում են երկու (սակավ դեպքերում երկուսից ավելի) խոսքիմասային պատկանելության հատկանիշներ, ինչպես օրինակ՝ գծ և թվ- հիմքերին վերագրվում է գոյական— բայ ինֆորմացիան, նկատի ունենալով, որ այդ հիմքերը գրեթե հավասար հաճախականությամբ են հանդես գալիս թե՛ գոյական, թե՛ բայ հանդիսացող բառաձևերում։

Այնուհետև հիմքին վերագրվում են մնացած քերականական հատկանիշները, որոնց հիմքը պարունակում է իր մեջ (հոլով, թիվ, բայի ժամանակ և այլն)։ Բացի դրանից հիմքին պետք է վերագրել այնպիսի քերականական հատկանիշներ, որոնց հիմքը իր տվյալ ձևում չունի, բայց կարող է ձեռք բերել որոշակի բնույթի ձևույթների հետ հարաբերության մեջ մտնելիս։

Այսպես՝ պատկեր, սահման գոյականների գոյական, եզակի թիվ, ուղղական-հայցական հոլով բնութագրին ավելացվում է ներգործողության հատկանիշ՝ նկատի ունենալով, որ այդ գոյականներից բայական վերջավորության ավելացումով ստացվում են ներգործական սեռի բայեր։ Նույն հիմունքով ազատ և պարզ ածականներին վերագրվում է ներգործողության հատկանիշ։

Երկրորդական ձևույթների շարքում դիտում ենք երեք ենթախումբ՝ վերջածանցներ, նախածանցներ և վերջավորություններ։ Վերջածանց կոչվում են այն ձևույթները, որոնք հաջորդում են հիմքին և բառի վերաբերյալ կրում ես մաքսիմում քերականական ինֆորմացիա, եթե իրենցով վերջանում է բառը (քանի որ բառի մաքսիմում ինֆորմացիան պարունակվում է բառավերջի ձևույթի քերականական բնութագրում)։

Տրադիցիոն քերականության սահմանած բոլոր վերջածանցները, բացի նրանցից, որոնք այժմ սպառել են իրենց բառակազմական արժեքը (-արդ, -եք, -իցս, -ունդ), մտնում են վերջածանցների մեջ՝ իրենց ալոմորֆներով հանդերձ։ Այսպես՝ «իչ», «ում» և «ություն» գոյականակերտ ածանցների կողքին ունենք նաև «չ», «մ» և «ութ» գոյականակերտ ածանցները։

Վերջածանցներին ևս վերագրվում են այն բոլոր քերականական հատկանիշները, որոնցով օժտված է, կամ որոնք կարող է ձեռք բերել վերջածանցը որոշակի ձևույթների հետ հարաբերության մեջ մտնելիս։

Նախածանց կոչում ենք այն ձևույթները, որոնք նախորդում են հիմքին և բառի վերաբերյալ կրում են մաքսիմում քերականական ինֆորմացիա, եթե հիմքին չեն հաջորդում վերջածանցներ ու վերջավորություններ, որոնք օժտված են նախածանցի բերած ինֆորմացիային հակադիր քերականական ինֆորմացիայով։ Բացառություն են կազմում «իք» և «ք» վերջածանցները, որոնց առկայությամբ նախածանցը պահպանում է իր քերականական արժեքը (անշնորհք, համակարծիք)։ Անշարժ և համանուն բառերում «ան» և «համ» ածականակերտ նախածանցների բերած քերականական ինֆորմացիաները հիմնական նշանակություն ունեն տվյալ բառերի վերջնական քերականական բնութագրերի համար, սակայն, եթե այդ բառերի հիմքերին հաջորդի հակադիր քերականական ինֆորմացիա կրող «ություն» վերջածանցը, «ան» և «համ» նախածանցների բերած ինֆորմացիան կջնջվի, իսկ եթե անշարժ և համաչափ բառերի հիմքերին հաջորդի «ելի» ածականակերտ վերջածանցը, որի բերած ինֆորմացիան չի հակադրվում «ան» և «համ» նախածանցների ինֆորմացիային, ապա վերջիններիս քերականական արժեքը կպահպանվի։

Հայերենի նախածանցներից նպատակահարմար ենք համարել առանձնացնել «ան», «ամենա», «համ» («համա»), «տ», «դժ», «չ» ածականակերտ նախածանցները։ Նախածանցների դասի մեջ ենք մտցրել նաև «չ» ժխտական մասնիկը և «կ» պայմանականի եղանակիչը, որոնց բերած ինֆորմացիան ընդհանրապես պահպանվում է։

Վերջավորությունները այն ձևույթներն են, որոնք հաջորդում են հիմքին կամ վերջածանցին և հանդիսանում են բառի վերջնական քերականական ինֆորմացիայի կրողները։ Վերջավորությունների հետազոտության հարցը վերաբերում է ձևաբանական և շարահյուսական անալիզների բնագավառին։

Բառակազմական անալիզը, ստրուկտուրալ անալիզի մեթոդի տեսանկյունից հենվում է 2 տիպի հանդիպադրությունների (իրարամերժ դասերի) վրա։ Դրանցից մեկը վերաբերում է բառի սահմաններում ձևույթների դասավորության կարգին—(դիստրիբուցիային), մյուսը՝ բառ կազմող ձևույթների քերականական հատկանիշների փոխհարաբերություններին։

Գլիսոնի բնորոշմամբ՝ «կարգերը ձևույթների իրարամերժ դասեր են, որոնք բառ կազմող ձևույթների հաջորդականության մեջ որոշակի տեղ են գրավում»[2]։

Բառակազմության ժամանակ ձևույթները զանազան բարդ կոմբինացիաների մեջ են մտնում։ Նման կոմբինացիաներ կազմելու օրինաչափությունները պատկերելու համար հարմար է բառ կազմող ձևույթների իրարամերժ դասերը խմբավորումներ կատարել։ Այսպիսի դասերի հիմնական խմբավորումներն են հիմքը, վերջածանցը և նախածանցը, որոնց ներսում ըստ կարգերի անց է կացվում ավելի մանրամասն խմբավորում։ Դրանով սահմանվում է, որ տվյալ կարգին պատկանող ձևույթը կարող է հաջորդել կամ նախորդել այլ, որոշակի կարգի պատկանող ձևույթների։ Միևնույն բառի մեջ չեն կարող զուգորդվել միևնույն կարգին պատկանող ձևույթները։

Այս հարցի մանրամասն նկարագրությունը տվել է Գլիսոնը։

Այդպիսի կարգեր սահմանելու ուղղությամբ որոշ աշխատանք սկսված է հայերենի գոյականի բառակազմության մեջ մտնող բոլոր վերջածանցների համար։ Այսպես, «արք», «արան», «անոց», «ատ», «ացու» և այլ գոյականակերտ վերջածանցներ մտցվում են վերջածանցների այն կարգի մեջ, որոնք հաջորդում են անմիջապես հիմքին և իրենցից հետո թույլ չեն տալիս որևէ այլ ածանցի հաջորդում (հաշվի չենք առնում արհեստական և խիստ սակավ կիրառվող դեպքերի հնարավորությունը)։ «Ացն», «եցն», «ցն», «ան», «են» վերջածանցները պատկանում են այնպիսի կարգի վերջածանցների, որոնք անմիջապես հաջորդում են հիմքին, սակայն այդ զուգորդությունից գոյական ստանալու համար պետք է, որ նրանց հաջորդի «ելի», «ալի» կարգին պատկանող որոշակի վերջածանց, այնուհետև միայն «ություն», «ք» կարգին պատկանող որոշակի գոյականակերտ ածանց։

Այս աշխատանքն առայժմ կրում է նախնական, նախապատրաստական բնույթ։

Ինչպես վերը նշել ենք, բառակազմական անալիզի հիմնական նպատակը բառի հնարավոր սահմաններում լիակատար քերականական բնութագրի ստացումն է առանց կոնտերստին դիմելու։ Այստեղից պարզ է դառնում բառ կազմող ձևույթների քերականական բնութագրերի կարևորությունը։

---

[2] Г. Глисон, Введение в дескриптивную лингвистику, М., 1959.

Քերականական բնութագիր կոչում ենք քերականական հատկանիշների ամբողջ շղթան, որով օժտված է տվյալ ձևույթը։ Քերականական հատկանիշները բաժանվում են իրարամերժ դասերի. հիմնական իրարամերժ դասերը խոսքի մասեր են։ Մի շարք խոսքի մասեր օժտված են այնպիսի հատկանիշներով, որոնք տեղաբաշխվում են ըստ առանձին կատեգորիաների. կատեգորիաներ են քերականական այնպիսի առանձնահատկությունները, ինչպես հոլով (ոչ կոնկրետ), անցողականություն թիվ, դեմք և այլն։ Բառի քերականական բնութագրի մեջ կարող է մտնել մի որոշակի կատեգորիայի պատկանող միայն մեկ հատկանիշ։ Տրադիցիոն քերականության մեջ հիմնականում արդեն դիտված են այն օրինաչափությունները, որով տվյալ խոսքի մասին պատկանող բառը կարող է ունենալ այս և ոչ մյուս քերականական կատեգորիային պատկանող հատկանիշ, և տվյալ բառի քերականական բնութագրում կարող են զուգորդվել որոշակի կատեգորիաների պատկանող որոշակի քերականական հատկանիշներ։

Բառակազմական անալիզի ամենակարևոր և դժվար խնդիրներից մեկը քերականական նույնանունությունն է։ Նույնանուն են համարվում այն ձևույթները, որոնք նման են արտաքին հնչյունական կողմով, բայց ունեն քերականական հակադիր բնութագրեր։ Նույնանուն կարող են լինել ինչպես հիմքերը, այնպես էլ ածանցները ու վերջավորությունները։ Քերականական նույնանունությունը դիտվում է ինչպես ածանցների և վերջավորությունների դասերի ներսում, այնպես էլ այդ երկու դասերի միջև։ Այստեղ արդեն բառակազմական անալիզը առնչվում է ձևաբանական (ֆլեկտիվ) անալիզի հետ։ Հաճախ ձևաբանական անալիզն էլ գործին չի օգնում և հարկ է լինում դիմելու շարահյուսական անալիզին։

Բառակազմական անալիզի էտապում նույնանունությունից վերջնականապես ազատվել հնարավոր չէ։

Տվյալ բառի սահմաններում քերականական նույնանունությունից ազատվելու համար կարևոր նշանակություն ունեն ձևույթների իրարամերժ կարգերն ու քերականական հատկանիշների հանդիպադրված դասերը։ Այս միտքը ավելի կոնկրետ դարձնելու համար բերենք հայերենի «ում» ձևույթի նույնանունության հանման համար կազմված «աքսիոմաները»։

«ում»-ը գոյականակերտ վերջածանց է՝ գոյականի ուղղական-հայցական հոլով, գոյականի ներգոյական հոլովի հոլովակազմիչ է և անկատար դերբայի դերբայական վերջածանց։ Այս հանգամանքը ստիպում է, որ առնչակցվեն բառակազմական ու ձևաբանական անալիզները։

ԱՔՍԻՈՄԱՆԵՐ

1. Եթե «ում»-ը հաջորդում է բայական -վ, -ան, -են, -ն, -չ, -ացն, -եցն, -ցն վերջածանցներին կամ որոշակի կարգի բայահիմքերի (աս-ում, նստ-ում, խոս-ում), ապա ունենք անկատար դերբայ։

2. Եթե «ում»-ը հաջորդում է բայական -աց, -եց ածանցներին, ապա ունենք գոյականի ուղղական/հայցական հոլով (զարգ-աց-ում, գոյ-աց-ում)։

Գոյականի ուղղական/հայցական հոլով ունենք նաև այն դեպքում, երբ «ում»-ը հաջորդում է հարադիր բայից առաջացած որոշակի բնույթի հիմքերի (մեջբերում, իրարանցում, առաջքաշում)։

3. Հատուկ բնույթի բայահիմքերի հաջորդելիս (որոնք ներկայի հիմքում ունեցել են -ն սոսկածանցը), «ում»-ը կազմում է գոյականի ուղղական/հայցական հոլով. այս կարգի բայահիմքեր են նաև տր-, դր-, դարձ- բայահիմքերը։ Օրինակներ՝ առ-ում, անց-ում, տր-ում, դր-ում և այլն։

4. Գոյականների հիմքերի մեծ մասից (սենյակ, գիրք, գյուղ) և որոշակի բնույթի ածականների ու ածական/մակրայ հիմքերից (միջնակարգ, լավ, բարձր, բազմարժեք), ինչպես և հատուկ բնույթի գոյականակերտ ու ածականակերտ ածանցներով հիմքերի հաջորդելիս «ում»-ը կազմում է գոյականի ներգոյական հոլով։ Ներգոյական հոլով ունենք նաև այն դեպքում, երբ «ում»-ը հաջորդում է -եր, -ներ հոդնակիակերտ վերջավորություններին։

5. Եթե «ում»-ը հաջորդում է հատուկ բնույթի բայահիմքերի (հան-, ճնշ-, կախ-, լուծ-) ինչպես և հատուկ բնույթի ածականների հիմքերի (աղատ, հարթ, պարզ) և ավոր վերջածանցով ածականի, ապա ստացվում է գոյականի ուղղական/հայցական հոլով և անկատար դերբայ նույնանունություններ, որից անարավոր չէ աղատվել առանց կոնտեքստին դիմելու։ Օրինակ՝ հանում, ճնշում, աղատում, արժեքավորում և այլն։

6. Հատուկ բնույթի գոյականների հիմքերի (պատկեր, սահման) ինչպես և գոյական/բայ նույնանունություններ ունեցող հիմքերի (գծ-, հաշվ-, թվ-,) հաջորդելիս «ում»-ի կազմած գոյականի ուղղական/հայցական ներգոյական հոլով և անկատար դերբայ նույնանունությունից աղատվել հնարավոր չէ առանց կոնտեքստին դիմելու։ Օրինակներ՝ պատկերում, սահմանում, գծում, հաշվում և այլն։

Բառակազմական անալիզի ավարտումից հետո պետք է կազմվեն ձևական կանոններ՝ աքսիոմաներ, որոնց հիման վրա կառուցվելու են բառեր։